Պատմության թեստ

Հրահանգ

Ձեր առջև քննական թեստի էլեկտրոնային բուկլետն է:

Ուշադիր ծանոթացեք թեստի յուրաքանչյուր առաջադրանքին, լավ ըմբռնեք յուրաքանչյուր առաջադրանքի պահանջը, այնուհետև սկսեք աշխատանքը:

Թեստի առավելագույն միավորն է՝ 55:

Թեստի աշխատանքի համար տրամադրվում է 4 ժամ:

Մաղթում ենք հաջողություն

Հաջորդ էջին անցնելու կամ ետ վերադառնալու համար
կարող եք կիրառել ստեղնաշարի կոճակները:

Հրահանգ №1-22 առաջադրանքների համար: Յուրաքանչյուր հարցին կից տրված է չորս ենթադրական պատասխան: Դրանցից միայն մեկն է ճիշտ: Ձեր կողմից ընտրված պատասխանը նշելու միակ ճանապարհը պատասխանների թերթիկի համապատասխան վանդակում X նշան դնելն է: Ոչ մի այլ նշում, հորիզոնական կամ ուղղահայաց գծեր, շրջագծում և այլն, չի ընկալվում էլեկտրոնային ծրագրի կողմից: Եթե ցանկանում եք ուղղել պատասխանների թերթիկում նշած պատասխանը, ապա ամբողջությամբ ներկեք այն վանդակը, որտեղ դրել եք X նշանը, ապա նշեք պատասխանի նոր տարբերակը (դրեք X նշանը նոր վանդակում): Կրկին անգամ ընտրել այն պատասխանը, որն արդեն ուղղել եք հնարավոր չէ: Յուրաքանչյուր առաջադրանք գնահատվում է 1 միավոր:

(1) 1. Ի՞նչ լեզվով է գրված Գիլգամեշ էպոսը:

ա) Աքքադերեն,

բ) պարսկերեն,

գ) Հունարենով,

դ) եգիպտերեն:

(1) **2. Ումի՞ց էին ընդօրինակել եգիպտացիները մարտական կառքերը:**

ա) Ասորիներից,

բ) պարսիկներից,

գ) նուբիացիներից,

դ) հիքսոսներից:

(1) **3. Ո՞ր պետության կառավարիչների նստավայրն էր Պերսեպոլիսը:**

ա) Խեթական թագավորության,

բ) Փռյուգիայի,

գ) Աքեմենյան թագավորության,

դ) Միտաննիի:

(1) **4. Ի՞նչ առաջարկեց Ալքիբիադեսը աթենացիներին Պելոպոնեսյան պատերազմի ժամանակ:**

ա) Շրջափակման մեջ վերցնել Լակեդեմոնի գլխավոր քաղաքները,

բ) ազատ արձակված ստրուկների հաշվին համալրել Հոպլիտների շարքերը,

գ) արեոպագոսի փոխարեն իշխանությունը փոխանցել դիկտատորին,

դ) կազմակերպել ռազմարշավ դեպի Սիցիլիա կղզի:

(1) **5. Գայոս Մարիոսի գործունեության մասին ո՞ր տեղեկատվությունն է ճիշտ:**

ա) Հռոմեացի սենատոր էր, ով աչքի էր ընկնում իր ժողովրդավարական հայացքներով և առաջ էր քաշել ժողովրդական տրիբուն ընտրելու գաղափարը,

բ) հայտնի քաղաքական գործիչ և զորահրամանատար էր, ով պարտության մատնեց կիմվրներին և տևտոններին և կարևոր բարեփոխում իրականացրեց հռոմեական բանակում,

գ) հնագույն պատրիկյան տոհմի ներկայացուցիչ էր, որն ակտիվորեն ընդդիմանում էր հանրապետական կառավարմանը և աջակցում էր Սուլլային,

դ) պլեբեյների շարքերից դուրս եկած հայտնի հռետոր էր, որը դարձավ գերագույն պոնտիֆիկոս և որոշ ժամանակ կատարում էր նաև պրինցեպսի պարտականությունը:

(1) **6. Ո՞ր հռոմեացի հեղինակն է նկարագրել հին գերմանացիների կենցաղը I-II դարերի սահմանագծին:**

ա) Հովսեփոս Փլավիոսը,

բ) Տիտոս Լիվիոսը,

գ) Պոլիբիոսը,

դ) Տացիտոսը:

(1) **7. Ի՞նչ է իրենից ներկայացնում Արմազիի բիլինգվան, որտեղ հիշատակվում են՝ Զևախը, Յոդմանգանը, Սերաֆիտան և այլք:**

ա) Հունարեն և արամեերեն արձանագրություններով փորագրված տապանաքար,

բ) լատիներեն և արամեերեն արձանագրություններով թագավորական սալաքար (ստելա),

գ) հեթանոսական տաճարի պատին հունարեն և լատիներեն լեզուներով արված շինարարական արձանագրություն,

դ) արամեերեն և պարսկերեն արձանագրություններով փորագրված ծիսական կոթող:

(1) **8. Աթթիլայի մասին ո՞ր պնդումն է ճիշտ:**

ա) Չնայած հասարակ ծագմանը նրան հաջողվեց դառնալ հոների առաջնորդ, նրանց հետ միասին ասպատակեց Արևմտյան Հռոմեական կայսրությունը, գրավել Ռավեննան և հաղթանակ տանել Պուատյեի ճակատամարտում,

բ) հոների առաջնորդի կրտսեր որդին էր, և հոր տիրույթների բաժանման ժամանակ ստացավ Հարավարևելյան Եվրոպայի հողերը, որտեղ ստեղծեց անկախ տերություն, գրավեց և թալանեց Կոստանդնուպոլիսը,

գ) հոների առաջնորդն էր, որն ասպատակեց Արևելյան Հռոմեական կայսրության հողերը, Հռոմի պապի հետ հանդիպելուց հետո այլևս չարշավեց դեպի Հռոմ և հաջողության չհասավ Կատալաունյան (Ժողովուրդների) ճակատամարտում,

դ) Կուրուլթայում ընտրվեց հոների առաջնորդ և ղեկավարեց նրանց մեծ արշավանքը դեպի արևմտյան հողեր, ոչնչացրեց վանդալների թագավորությունը, սակայն պարտվեց Տրազիմենյան ճակատամարտում:

(1) **9. Աշոտ Բագրատիոնիի մասին ո՞ր պնդումն է ճիշտ:**

ա) Առաջին Բագրատիոնին է, որը պեչենեգների դեմ պայքարում ցուցաբերած օգնության համար բյուզանդական կայսրից ստացավ կյուրոպաղատի տիտղոս, միաժամանակ գրավեց Շիդա Քարթլին և որպես մայրաքաղաք հռչակեց Ուփլիսցիխեն,
բ) Փառնավազյան դինաստիայի վերջին ներկայացուցչի մահից հետո կարգվեց վրացիների թագավոր, Կախեթ-Հերեթիի քորեպիսկոպոսի հետ միասին պարտության մատնեց ամիրային և կարճ ժամանակով գրավեց նաև Թբիլիսին,
գ) վրաց թագավորների և իշխանների շրջանում ամենաազդեցիկ քաղաքական դեմքն էր, այդ իսկ պատճառով ստացավ կյուրոպաղատի տիտղոս, սակայն թագավորությունում բռնկված ներքին պատերազմի ժամանակ դավադիրները նրան սպանեցին Օշկի տաճարում, որտեղ և հուղարկավորեցին,
դ) Քարթլիի վերջին Էրիսմթավարին էր, որը արաբների հետ հակամարտության պատճառով հեռացավ Արևելյան Վրաստանից, տեղափոխվեց Հարավային Վրաստան, որտեղ ստեղծեց իշխանություն, իսկ որպես նստավայր ընտրեց Արտանուջի ամրոցը:

(1) **10. Ո՞ր իրադարձության հետ է կապված վրաց արքունիքում «ոչ ազնվազարմ» առաջխաղացումը XII դարի երկրորդ կեսին:**

ա) Ղութլու Արսլանի հակաքայլը,

բ) Դեմետրե I-ի գահից հրաժարվելու,

գ) Գեորգի Ռուսին բերելու,

դ) Դեմնա արքայազնի ապստամբության:

(1) **11. Ի՞նչ էր իրենից ներկայացնում Օրդալիան միջնադարյան Եվրոպայում:**

ա) Ավագ որդուն ժառանգությունը փոխանցելու կարգ,

բ) ասպետ կարգելու արարողություն,

գ) հոգևորական կոչում շնորհելու ծես,

դ) մեղավորությունը որոշելու մեթոդ:

(1) 12. Ո՞ր վրաց թագավորի օրոք է ստեղծվել «Զեգլիս դաղեբա» օրենքների ժողովածուն:

ա) Ալեքսանդրե I-ի,

բ) Բագրատ IV-ի,

գ) Գեորգի V-ի,

դ) Վախթանգ VI-ի:

(1) **13. Ո՞ր սուլթանի օրոք օսմանցիներն առաջին անգամ գրավեցին որոշակի տարածք Եվրոպա մայրցամաքում:**

ա) Օսման I-ի,

բ) Օրհան I-ի,

գ) Մուրադ I-ի,

դ) Բայազիդ I-ի:

(1) **14. Ի՞նչ դեր խաղաց հունգարացի ինժեներ Օրբանը Կոստանդնուպոլսի անկման գործում:**

ա) Նա ղեկավարում էր թունելի փորումը, որի միջոցով օսմանները կարողացան ներխուժել քաղաք,

բ) նա կառուցեց նոր տեսակի նավեր և օսմանները կարողացան շրջափակել քաղաքը ծովից ևս,

գ) նա կառուցեց մի քանի պաշարողական աշտարակ և օսմանները կարողացան բարձրանալ քաղաքի պարիսպների վրայով,

դ) նա ձուլեց թնդանոթ, որի միջոցով օսմանները քանդեցին քաղաքի պարիսպը:

(1) **15. Ո՞վ է կառուցել Ֆլորենցիայի Սանտա Մարիա դել Ֆիորեի տաճարի գմբեթը:**

ա) Ֆիլիպո Բրունելեսկին,

բ) Ջորջո Վազարին,

գ) Անդրեա դել Վերոկկիոն,

դ) Ռաֆայել Սանտին:

(1) **16. Ո՞ր պատմական աշխատության հեղինակն է Օման Խերխեուլիձեն:**

ա) Գեորգի Տասներեքերորդի կյանքը,

բ) Քարթլիի պատմությունը,

գ) Վրաստանի թագավորության նկարագրությունը,

դ) Իրակլի Երկրորդի թագավորումը:

(1) **17. Ռուսական կայսրությունը վրացական ո՞ր քաղաքական միավորի հետ է կնքել Էլազնաուրիի պայմանագիրը:**

ա) Աբխազիայի իշխանության,

բ) Օդիշիի իշխանության,

գ) Իմերեթիի թագավորության,

դ) Սամցխեի իշխանության:

(1) **18. Ի թիվս այլ պատճառների, ի՞նչը հանգեցրեց 1819-1820 թվականների Իմերեթիի ապստամբությանը:**

ա) Եկեղեցական բարեփոխումը,

բ) Սոլոմոն II-ի վերադարձը Իմերեթի,

գ) Արևելյան Վրաստանում բռնկված հուզումները,

դ) ազնվականների կողմից գյուղացիների նկատմամբ հարկերի ավելացումը:

(1) **19. XIX դարում ո՞ր պարբերական հրատարակության շուրջը հավաքված խումբն էին անվանում «Մեսամե-դասի» (Երրորդ խումբ):**

ա) Իվերիայի,

բ) Կվալիի,

գ) Ցիսկարիի,

դ) Սաքարթվելոս մոամբեի:

(1) **20. Վրաստանի Դեմոկրատական Հանրապետությունում ի՞նչն էին անվանում Էրոբա:**

ա) Տեղական ինքնակառավարման մարմինները,

բ) երդվյալ ատենակալների դատարանները,

գ) քաղաքացիների հասարակական միավորումները,

դ) բանվորների արհմիությունները:

(1) **21. Ինչպե՞ս էր կոչվում XX դարի 20-ական թվականներին Խորհրդային Միությունում հակակրոնական քարոզչության համար ստեղծված կազմակերպությունը:**

ա) Մարտնչող անաստվածների միություն,

բ) Հակադավանանքային միավորում,

գ) Անհավատների լիգա,

դ) Ժողովուրդների հոգևոր կրթության կոմիտե:

(1) **22. Ի՞նչ էր ենթադրում Մարշալի պլանը:**

ա) Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո օգնության ցուցաբերում եվրոպական պետություններին,

բ) Սառը պատերազմի ժամանակ քաղաքական աջակցության ցուցաբերում Աֆրիկայի և Ասիայի երկրներին,

գ) հետխորհրդային երկրներում ժողովրդավարական բարեփոխումների իրականացում,

դ) Սառը պատերազմի ավարտից հետո առաջացած պետությունների աջակցություն:

Հրահանգ № 23-26 առաջադրանքների համար

Ժամանակագրական կարգով դասավորեք պատմական իրադարձություններն ու անձանց: Պատասխանները գրառեք պատասխանների թերթիկի վրա հատկացված վանդակներում: Հաշվի առեք, որ վանդակում գրվում է միայն նշված իրադարձության համապատասխան թվանշանը: Առաջին վանդակում գրվում է այն թվանշանը, որով նշված է բոլորից վաղ տեղի ունեցած իրադարձությունը և այլն, հետևաբար, վերջին երրորդ վանդակում կգրվի այն թվանշանը, որով նշված է բոլորից ուշ տեղի ունեցած իրադարձությունը: Յուրաքանչյուր առաջադրանք գնահատվում է 1 միավոր:

(1) **23. ժամանակագրական կարգով դասավորեք Ալեքսանդր Մակեդոնացու մղած ճակատամարտերը:**

1. Գավգամելա,
2. Իսոս,
3. Գրանիկոս:

(1) **24. Ժամանակագրական կարգով դասավորեք եվրոպացի փիլիսոփաներին՝ ըստ նրանց գործունեության ժամանակի:**

1. Էրազմոս Ռոտերդամցի,
2. Ժան-Ժակ Ռուսո,
3. Թոմաս Բեքեթ:

(1) **25. Ժամանակագրական կարգով դասավորեք Իլխանների պետության կառավարիչներին:**

1. Ղազան Խան,
2. Աբու-Սաիդ,
3. Հուլավու:

(1) **26. Ժամանակագրական կարգով դասավորեք վրացական ֆիլմերը:**

1. Ակակի Ծերեթելիի ճամփորդությունը Ռաճա-Լեչխումի,
2. Ջիմ Շվանթե (Սվանեթական աղ),
3. Զոջում:

Հրահանգ № 27 առաջադրանքի համար:

Աշակերտին տրված է քարտեզ: Սեփական գիտելիքների և քարտեզի վրա առկա տեղեկատվության միջոցով նա պետք է պատասխաներ տրված հարցերին: Աշակերտի տրված պատասխաններից չորսը (4) սխալ է: Դուք պետք է գտնեք բոլոր չորս սխալներն, արտագրեք դրանք պատասխանների թերթիկի համապատասխան տեղում և նույն տեղում ավելացնեք ճիշտ պատասխանները: Առաջադրանքի առավելագույն միավորն է՝ 4:

Առաջադրանք 27. Քարտեզն ու հարցերը տե՛ս հաջորդ էջերում



Հարցերը տե՛ս հաջորդ էջում

Աշակերտին ուղղած հարցերը.	Աշակերտի տված պատասխանները.
27.1. Ինչպե՞ս էր կոչվում պետությունը, որի արշավանքներն ու տարածքային ընդլայնման փուլերը պատկերված են քարտեզի վրա:	27.1. Արևմտյան Հռոմեական կայսրություն
27.2. Անվանե՛ք քարտեզի վրա պատկերված ցեղը, որը լիովին պահպանել է իր անկախությունը:	27.2. Խորվաթներ
27.3. Համաձայն քարտեզի՝ ո՞ր ցեղն է կորցրել ազատությունը 772-804 թվականներին և ճակատամարտում պարտության մատնելուց ու նվաճելուց բացի, ևս ինչպե՞ս է վարվել քարտեզի վրա նշված պետությունը այս ցեղի նկատմամբ:	27.3. Սաքսեր, պարտադրել են ընդունել քրիստոնեություն
27.4. Համաձայն քարտեզի՝ ամբողջությամբ թվարկեք պաշարման արդյունքում գրավված քաղաքները:	27.4. Վերոնա, Օտեն
27.5. Համաձայն քարտեզի՝ ո՞ր տարածաշրջաններն են ընդգրկվել քարտեզի վրա նշված պետության կազմի մեջ նրա ընդլայնման առաջին փուլում:	27.5. Բուրգունդիա, Բավարիա

Հրահանգ № 28 առաջադրանքի համար: Ուշադիր վերլուծե՛ք նկարի տեղեկատվությունը և պատասխանե՛ք տրված հարցերին: Հաշվի՛ առեք, որ երկու նկարներում պատկերված է մեկ պատմական գործընթացի երկու դրվագ: Պատասխանները գրառե՛ք պատասխանների թերթիկի համապատասխան տեղում: Առաջադրանքի առավելագույն միավորն է 7:

Առաջադրանք 28. Նկարներն ու հարցերը տե՛ս հաջորդ էջերում

N1 N2

Երկու նկարները վերաբերում են պատմական մեկ իրադարձության

հարցերը տե՛ս հաջորդ էջում

Հարցեր:

(2) **28.1.** Ինչպե՞ս էին անվանում պատերազմող կողմերին, որոնց ներկայացուցիչների միջև պայքարը պատկերված է N1 նկարում: Նշեք, թե նկարում տրված կոնկրետ որ տեղեկության հիման վրա եք հանգել նման եզրակացության:

(2) **28.2.** Անվանե՛ք N2 նկարում պատկերված պատմական իրադարձության երկու գլխավոր մասնակիցներին:

(2) **28.3.** Անվանե՛ք այն պատմական իրադարձության պատճառն ու հետևանքը, որի երկու փուլերը պատկերված են նկարներում:

(1) **28.4.** Անվանե՛ք մեկ գրական ստեղծագործություն կամ ֆիլմ, որը պատմում է տրված նկարներում պատկերված իրադարձությունների մասին և ձեր կողմից կարող է օգտագործվել որպես լրացուցիչ ուսումնական ռեսուրս:

Հրահանգ №29 առաջադրանքի համար: Ուշադիր ընթերցե՛ք ստորև բերված պատմական փաստաթուղթը, ըմբռնե՛ք տեքստը և պատասխանե՛ք հարցերին: Պատասխանները գրե՛ք պատասխանների թերթիկի համապատասխան տեղում: Առաջադրանքի առավելագույն միավորն է 18:

Առաջադրանք 29. Պատմական փաստաթուղթն ու հարցերը տե՛ս հաջորդ էջերում

1095 թվականին Կլերմոնում հավաքված ժողովրդին ուղղված Հռոմի պապի կոչը

Գալիայի երկրում, Կլերմոն քաղաքում գումարվեց եկեղեցական ժողով, որին մասնակցում էր Պապը, հռոմեական եպիսկոպոսներն ու կարդինալները, ինչպես նաև գալլերը, գերմանացիները և կայսրության մյուս բնակիչները՝ ինչպես եպիսկոպոսները, այնպես էլ աշխարհիկ մեծամեծները: Եկեղեցական ժողովն ավարտվելուց հետո պապը դուրս եկավ լայնարձակ հրապարակ և կոչ արեց հավաքվածներին.

Ո՜վ ֆրանկ ժողովուրդ, ձեր հողերի դիրքով և կաթոլիկ հավատքով, ինչպես նաև Սուրբ Եկեղեցու հանդեպ ձեր նվիրվածությամբ դուք տարբերվում եք բոլոր մյուս ժողովուրդներից, ուստի հենց ձեզ եմ դիմում և ձեզ է ուղղված մեր կոչը: Մեր ցանկությունն է իմանաք, թե որն է ձեր երկիր մեր գալու դառնաղետ պատճառը և ինչ հրատապություն է պահանջվում ձեզանից և բոլոր քրիստոնյաներից:

Կոստանդնուպոլիս քաղաքից ուշագրավ լուրեր են հասել, նախկինում ևս բավական հաճախ ենք լսել այն մասին, որ Պարսկական թագավորության ժողովուրդը՝ այդ անիծյալ ժողովուրդը, օտարոտի ցեղը, այդ անաստվածները, հավատուրացները, որոնք սրտով և հոգով անհավատարիմ են Աստծուն ներխուժել են Երուսաղեմ՝ քրիստոնյաների երկիր, կողոպտել, այրել, ոմանց պատանդ են վերցրել և տարել իրենց երկրները, ոմանց էլ խայտառակ կերպով ոչնչացրել, Աստծո տաճարները կա՛մ հիմնահատակ ավերել են, կա՛մ հարմարեցրել դրանք իրենց սեփական ծեսերի համար…

Անցնել հարցերին՝ 1 2 3 4 5 6 7 8 9 10 11 12

Տեքստի շարունակությունը տես հաջորդ էջում

Հունական թագավորությունն այնքան է կրճատվել և ավերվել նրանց կողմից, որ կորցրած տարածքները հնարավոր չէ շրջել նույնիսկ երկու ամսում:

Ով է պատասխան տալու այս ամենի համար, խլելու նրանց ձեռքից այս հողը, եթե ոչ դուք, ում Աստված օրհնել է ու փառավորել զենքի զորությամբ և ոգու մեծությամբ, օժտել է առաքինությամբ և ձեզ վնաս պատճառող հակառակորդ թշնամիներին ջախջախելու հմտությամբ և քաջությամբ:

Տա Աստված, ձեր նախնիների բարի գործերը, որոնք վերջ դրեցին հեթանոսների տիրապետությանը և ընդարձակեցին Սուրբ Եկեղեցու սահմանները, արթնացնեն ձեր մեջ մարտական ոգին և քաջությունը: Տա Աստված, Մեր Փրկչի, մեր Տիրոջ սուրբ գերեզմանը, որն այժմ անհավատների ձեռքում է, իսկ սուրբ վայրերը ապականվում ու պղծվում են նրանց կողմից,

Անցնել հարցերին՝ 1 2 3 4 5 6 7 8 9 10 11 12

արթնացնեն ձեր մեջ մարտական ոգին:

Ո՜վ ֆրանկ ժողովուրդ, քաջարի զինվորներ և անպարտելի նախնիների ժառանգներ: Չհամարձակվեք ուրանալ նրանց փառապանծ սխրագործությունները: Ընդհակառակը, հիշե՛ք ձեր նախապապերի հերոսությունները, եթե ձեզ հուզում է ձեր երեխաների և ծնողների, ձեր կանանց հանդեպ սերը: Մտածե՛ք այն խոսքերի մասին, որոնց շուրջ Տերը խոսում է Ավետարանում. «Եվ ամեն ոք, ով թողել է տուն կամ եղբայրներ, կամ քույրեր, կամ հայր, կամ մայր, կամ կին, կամ որդիներ, կամ ագարակներ՝ իմ անվան համար, հարյուրապատիկ պիտի ստանա և հավիտենական կյանքը պիտի ժառանգի»:

Թող չհրապուրի ձեզ հարստությունը և թող չանհանգստացնեն ձեզ ընտանեկան գործերը, քանզի Երկիրը, որտեղ բնակվում եք բոլոր կողմերից սեղմված է

Տեքստի շարունակությունը տես հաջորդ էջում

ծովով և լեռնաշղթաներով, սահմանափակված է ձեր բազմամարդությամբ, հարստություններով հողն առատ չէ և հազիվ է կերակրում այն մշակողներին:

Ահա թե ինչու եք դուք խժռում իրար, պատերազմներ մղում ու մահացու վերքեր պատճառում միմյանց: Տա Աստված դադար առնի ձեր միջև եղած ատելությունը, հանդարտվի թշնամությունը, դադարեն պատերազմներն ու նիրհի երկպառակությունը:

Ճամփա՛ ընկեք դեպի սուրբ գերեզմանը, խլե՛ք այդ երկիրն անհավատներից և ձերը դարձրեք: Երուսաղեմը Երկրագնդի կենտրոնն է, երկրիս ամենաբարեբեր հողն է: Այն, կարծես, երկրորդ դրախտը լինի: Այդ հողում, ինչպես Սուրբ գրքում է ասված, մեղր և կաթ է հոսում: Մարդկության Փրկիչը փառավորել է այն իր գալուստով, շքեղացրել իր արարքներով, փրկել և օրհնել իր տանջանքներով, հավերժացրել իր մահով:

Անցնել հարցերին՝ 1 2 3 4 5 6 7 8 9 10 11 12

Երկրի կենտրոնում գտնվող այս արքայատեսիլ քաղաքն այսօր թշնամու ձեռքում է և ավերվում է տարբեր անաստված ժողովուրդների կողմից: Այդ քաղաքն ազատագրման է սպասում՝ անդադար աղոթելով, որ դուք գաք այն փրկելու: Այն հատկապես ձեզանից է օգնություն պահանջում, քանի որ դուք, ինչպես արդեն ասացինք, մյուս ժողովուրդների համեմատ Տիրոջ կողմից օժտված եք զենքի մեծ զորությամբ: Բռնեք այդ ուղին մեղքերի քավության համար, վստահ լինելով Երկնքի Արքայության անեղծ փառքի մեջ:

հարցերը տե՛ս հաջորդ էջերում

Հարցեր.

(1) **29.1.** Ինչպե՞ս ենք անվանում այն դարաշրջանը, որը սկսվեց Հռոմի պապի կոչից հետո:

(1) **29.2.** Ըստ ձեզ՝ ինչո՞ւ էր այս կոչի նախաձեռնողը հենց Հռոմի պապը:

(1) **29.3.** Անվանե՛ք այն Հռոմի պապին, որը կոչով դիմեց Կլերմոնում հավաքված ժողովրդին:

(1) **29.4.** Համաձայն փաստաթղթի՝ ժողովին մասնակցել են «գալլերը, գերմանացիները և կայսրության մյուս բնակիչները»: Ինչպե՞ս է կոչվում այդ կայսրությունը:

Անցնել փաստաթղթի տեքստի 1-ին էջին
Անցնել փաստաթղթի տեքստի 2-րդ էջին
Անցնել փաստաթղթի տեքստի 3-րդ էջին

(1) **29.5.** Ըստ ձեզ՝ ինչո՞ւ է պապը շեշտում «զենքի զորությամբ» փառավորելը:

(1) **29.6.** Աղբյուրի տեղեկությունների հիման վրա նշե՛ք, թե որ թերակղզում էին գտնվում Հունական թագավորության կորցրած տարածքները:

(2) **29.7.** Ո՞ր պետությունն է ենթադրվում «Հունական թագավորության» տակ և ո՞վ էր այդ թագավորության կառավարիչը տեքստում նկարագրված իրադարձությունների ժամանակ:

(2) **29.8.** Ըստ փաստաթղթի՝ անվանե՛ք երկու կրոնական գործոն, որոնք օգտագործում է Հռոմի պապը հավաքվածներին արշավանքի տրամադրելու համար:

Անցնել փաստաթղթի տեքստի 1-ին էջին
Անցնել փաստաթղթի տեքստի 2-րդ էջին
Անցնել փաստաթղթի տեքստի 3-րդ էջին

(2) **29.9.** Համաձայն փաստաթղթի՝ նշե՛ք այն երկու տնտեսական գործոնը, որոնք Հռոմի պապը, հաշվի առնելով Եվրոպայում ստեղծված իրավիճակը, հավելյալ կերպով օգտագործում է հավաքվածներին արշավանքի տրամադրելու համար:

(2) **29.10.** Ըստ տեքստի՝ ի՞նչը կարող է խանգարել ֆրանկներին Սուրբ Գերեզմանն ազատագրելու ճանապարհին:

(2) **29.11.** Քրիստոնյաներից բացի, ուրիշ ո՞ր կրոնների հետևորդների համար է Երուսաղեմը համարվում Սուրբ քաղաք:

(2) **29.12.** Որքանո՞վ կարևոր էին Հռոմի պապի կոչից հետո տեղի ունեցած իրադարձությունները Վրաստանի համար: Ձեր կարծիքը հիմնավորելու համար բերեք կոնկրետ օրինակ և բացատրեք, թե ինչ կապ ունի այն վերևում նշված իրադարձությունների հետ:

Անցնել փաստաթղթի տեքստի 1-ին էջին
Անցնել փաստաթղթի տեքստի 2-րդ էջին
Անցնել փաստաթղթի տեքստի 3-րդ էջին